ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 04
Ֆաքս (+374 10) 52 42 82
Էլ. փոստ: minfin@minfin.am
Վեբ կայք: www.minfin.am

_______________ № _______________

Ձեր № ____________________________

.

***ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ պրն Արտակ Շաբոյանին***

Հարգելի պարոն Շաբոյան

Ձեր 01.02.2013թ. N ԱՇ/2.2-24/32-13 գրությամբ ներկայացված ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Առաջարկում ենք Նախագծի հոդված 12-ի 4-րդ մասի «թ» կետում հղում չկատարել «Գնումների մասին» ՀՀ օրենքին, քանի որ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «թ» ենթակետի ձևակերպումը ենթադրում է նաև <<Գնումների մասին» ՀՀ օրենքը:

Ինչ վերաբերում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին, ապա հայտնում ենք, որ նախագծի վերաբերյալ մեր դիրքորոշումը ներկայացրել ենք 24.01.2013թ. թիվ 1/4.5-1/754-13 գրությամբ, ինչով պայմանավորված առաջարկում ենք Նախագծին կից հիմնավորումից հանել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման վերաբերյալ հիմնավորումները, քանի որ նշված օրենքների նախագծերը գրությամբ ներկայացված չեն:

Միաժամանակ կից ներկայացնում ենք Նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության վերաբերյալ եզրակացությանը՝ կազմված Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 10-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 1021-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն:

Առդիր՝ 1 թերթ:

***Հարգանքով՝*** ***Վաչե Գաբրիելյան***



Կատ.՝ Վ. Գրիգորյան
☎ 595-257

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծով մասնավորապես նախատեսվում է՝

ա) վերանայել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված տուգանքների հաշվարկման և կիրառության ընթացակարգերը, ինչպես նաև սահմանել տույժ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից նշանակված տուգանքները սահմանված ժամկետում չվճարելու դեպքերի համար,

բ) համակենտրոնացման հայտարարագրման նպատակով սահմանել համակենտրոնացման հայտարարագրման վճար, որի չափը կազմելու է համակենտրոնացման մասնակիցների հասույթների հանրագումարի 0,1 տոկոսը կամ ակտիվների ընդհանուր արժեքի 0,1 տոկոսը, եթե վերջինիս մեծությունը ավելի մեծ կլինի համակենտրոնացման մասնակիցների հասույթների հանրագումարի 0,1 տոկոսից,

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից ներկայացված՝ նախագծի ընդունման դեպքում պետական բյուջեի եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին տեղեկանքը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կարող է լինել դրական: Իսկ Նախագծի ընդունումը կամ չընդունումը ՀՀ պետական բյուջեի ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն: